Արտաքին շահակիցների հետ հանդիպումների արդյունքների վերաբերյալ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

24.11.2018թ.

2018թ. սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ տարվող աշխատանքների համակարգող Էրինե Ղարայանը հանդիպումներ է ունեցել շուրջ 46 արտաքին շահակիցների հետ: Հանդիպումների նպատակն էր արտաքին շահակիցների հետ համագործակցության շրջանակներում՝ աջակցել մասնաճյուղի շրջանավարտներին աշխատանքի տեղավորվելու և կարիերան ապահովելու գործում:

Հայաստանյան հասարակական կյանքի ներկա իրողություններում երիտասարդ կադրերի զբաղվածության խնդիրը դարձել է ազգային ու պետական խնդիր: Ժամանակակից մրցակցային աշխատաշուկան իր ուրույն պահանջներ է առաջադրում շրջանավարտների մասնագիտական և անձնային որակներին, որն ուղղակի մարտահրավեր է կրթական համակարգին: Դրա համար ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ղեկավարությունն իր առաջնահերթ ռազմավարական խնդրի իրականացման ճանապարհին առանձնակի նշանակություն է տալիս արտաքին շահակիցների հետ համագործակցությանը: Այնպես որ, չափազանցություն չէ, եթե խոստովանենք, որ գործատուների աշխարհի հետ բուհի նորովի արդյունավետ կապի ապահովումը դարձել է կրթօջախի գոյատևման ու զարգացման նախապայման:

Այդ համատեքստում, ՄԿՈԱ բաժնի շրջանավարտների և արտաքին շահակիցների հետ տարվող աշխատանքների համակարգող Էրինե Ղարայանը նպատակային և կոնկրետ առաջարկներով հանդիպումներ է ունեցել Տավուշի մարզի վարչա-կառավարչական մարմինների, տնտեսա-արտադրական, բանկային ու վարկային, հասարակական, բարեգործական, զբոսաշրջային կազմակերպությունների և կրթական հաստատությունների ղեկավարների հետ, որոնք տարիների ընթացքում առնչվել են բուհի ուսանողության և շրջանավարտների հետ պրակտիկաների ու համատեղ իրականացված տարբեր աշխատանքների ժամանակ:

Հանդիպումների ընթացքում Է.Ղարայանը ներկայացրել է հանդիպման նպատակը, մատնանշել համագործակցության շրջանակներում մասնաճյուղի կողմից նրանց ներկայացվող առաջարկները, այդ համագործակցությունից արտաքին շահակցի ձեռքբերումները և մասնաճյուղի ակնկալիքները: Մասնավորապես, շեշտադրվել է, որ այդ հանդիպումից մասնաճյուղի ակնկալիքները հիմնականում ուղղված են պրակտիկաների կազմակերպման գործընթացի բարելավմանը, ուսումնառության նկատմամբ ուսանողների մոտիվացիայի բարձրացմանը, ապագա կարիերայի ապահովման նկատմամբ վստահության ձևավորմանը, աշխատաշուկայի պահանջների վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, ուսանողների ազատ ժամանակի նպատակային տնօրինմանը՝ կազմակերպություններում տարբեր ձևերով պրակտիկ աշխատանքներում ներգրավելու շնորհիվ:

Բուռն քննարկումներ են տեղի ունեցել այն առաջարկների շուրջ, որոնք Ղարայանը մասնաճյուղի անունից ներկայացրել է արտաքին շահակիցներին: Մասնաճյուղն իր շահակիցներին առաջարկում է համատեղ իրականացնել ինտերնշիֆային ծրագրեր (դասընթաց-քննարկումներ՝ նեղ մասնագիտական կողմանորոշման վերաբերյալ, ճանաչողական և գործնական պարապմունքներ՝ աշխատանքային փորձի ձեռքբերման համար, նպատակային պրակտիկաներ շահակցի պլանով և տեղում անցկացվող՝ ուսանողների ձեռք բերած հմտությունների և կարողությունների բարելավման համար),

թափուր աշխատատեղերի վերաբերյալ նախ իրազեկել մասնաճյուղին, հաճախակի այցելել մասնաճյուղ շրջանավարտների հետ նեղ մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ քննարկումներ իրականացնելու և փորձաշրջանով պրակտիկայի ծրագրերում նրանցից ընդգրկելու համար:

Ըստ մասնաճյուղի տեսլականի արդյունավետ համագործակցության արդյունքում բուհը գործատուներին կապահովի խելացի և աշխատասեր կադրերով, նեղ մասնագիտական հմտություններով և կարողություններով, ճիշտ և արագ կողմնորոշվող ապագա աշխատակիցներ: Մասնաճյուղը համագործակցության շրջանակներում ակնկալում է ուսանողների և շրջանավարտների կամավոր ներգրավում կազմակերպությունների կոնկերտ գործընթացներում, որի արդյունքում երկուստեք կունենան աշխատատեղերի վերաբերյալ իրազեկված և կոնկրետ գործատուի պահանջներին բավարարող շրջանավարտ-աշխատակիցներ:

Շրջանավարտներին, ինչպես նաև ուսանողներին աջակցման շրջանակներում ակնկալվում է կազմակերպությունների հետ մասնաճյուղի համատեղ գործունեության հատուկ պլանավորում և իրականացում:

Համատեղ քննարկումների ընթացքում շահակիցները նախ մատնանշել են մեր շրջանավարտների մի շարք ընդգծված թերությունները, որոնք հիմնականում առնչվում են գործատուների մոտ հարցազրույցներին ոչ ճիշտ ներկայանալուն, շփման մեջ կաշկանդված լինելուն, օտար լեզուների իմացության ցածր մակարդակին, ստեղծագործական մտքի և նախաձեռնողականության պակասին և այլն: Նախ նրանք գտնում են, որ անհրաժեշտ է ունենալ համագործակցության հուշագիր, ապա կատարել են ուշադրության արժանի մի շարք առաջարկներ: Ավագ և միջանակարգ դպրոցների տնօրեններն առաջարկում են 12-րդ դասարանցիներին պարբերաբար ընդունել համալսարում և նրանց դարձնել դասընթացների մասնակից: Առաջարկում են շրջանավարտներին գրանցել զբաղվածության կենտրոնում, որպեսզի նրանք մասնակից դառնան իրականացվող վերապատրաստումներին: «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության տնօրենը նշել է, որ իրենք կարող են ուղորդել ուսանողին բազմաֆունկցիոնալ զարգացման, աջակցել ուսանողին կրթության մեջ իր ներդրումն ունենալու համար, օգնել ուսանողին դառնալ մասնագետ իր ընտրած ոլորտում, ձևավորել նրանց մոտ նոր մեթոդներով ու կրեատիվ աշխատելու ունակություններ և այլն: Սերվիսի ոլորտի կազմակերպությունների ղեկավարները գտնում են, որ «Սերվիս» կրթական ծրագրի շրջանավարտները պետք է ունենան հաղորդակցման հմտություններ, լիրաժեք տիրապետեն Տավուշի մարզի տեսարժան վայրերի մասին տեղեկատվությանը, կարողանան հաղորդակցվել նաև անգլերեն լեզվով: Տարբեր կազմակերպություններ առաջարկում են հաճախակի կազմակերպել համատեղ ուսանողական ֆորումներ, գործնական հանդիպում-պարապմունքներ սեփական բիզնես գաղափարների շուրջ: Արտաքին շահակիցներից նշել են, որ մարզը ունի լրատվության խնդիր և առաջարկում են մասնաճյուղում բացել ժուրնալիստիկայի բաժին:

Ամփոփելով հանդիպման արդյունքները կարելի նշել, որ մեր արատքին շահակիցները պատրաստ են համագործակցել մասնաճյուղի հետ և աջակցել նրան ուսանողների ապագա մասնագիտական կողմնորոշման և համապատասխան մասնագիտական հմտությունների ձևավորման, շրջանավարտներին աշխատանքով ապահովելու գործընթացում:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին